ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԿԳՄՍՆ «Երևանի Լեոյի անվան հ. 65 ավագ դպրոց» ՊՈԱԿ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա՝ Փոխներգործուն (ինտերակտիվ) մեթոդների կիրառումը դպրոցում որպես ֆրանսերենի ուսուցման արդյունավետ ուսուցման միջոց

Կատարող՝ Շուշան Գաբրիելյան

Ղեկավար՝ Ք.Պետրոսյան

ԵՐԵՎԱՆ 2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1.ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ.....3

2.ՓՈԽՆԵՐԳՈՐԾՈՒՆ ՄԵԹՈԴՆԵՐԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ ԴՊՐՈՑՈՒՄ ՈՐՊԵՍ ՖՐԱՆՍԵՐԵՆԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑ

2.1.Փոխներգործուն մեթոդների էությունը, առանձնահատկություններն ու կիրառման սկզբունքները 5

2.2.Փոխներգործուն մեթոդների ընտրությունը և արդյունավետ համադրումը միջին դպրոցում ֆրանսերենի դասերին.....8

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ..... ..14

ՕԳՏԱԳՈՐԾԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ..... ...15

ՀԱՎԵԼՎԱԾ.....16

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

21-րդ դարում փոխվել են հասարակության արժեհամակարգի կոմնորոշիչները, ուստի վերաիմաստավորվել է նաև կրթության և դաստիարակության համակարգը՝ շեշտադնելով մարդկային գործոնի, անձի զարգացման հիմնախնդիրը և չանտեսելով համամարդկային արժեքները: Որպես բարձրագույն արժեք դիտարկվում է ազատ, կրթված, զարգացած անհատը, որը ընդունակ է ապրել և ստեղծագործել հարափոփոխ աշխարհում, լինել մրցունակ, հեշտությամբ ինտեգրվել համաշխարհային հանրությանը, ունենալ անկանխակալ մոտեցում, բաց լինել այլ մշակույթների համար:

Կրթության ոլորտը, արձագանքելով նոր ժամանակների մարտահրավերներին, խնդիր ունի ձևավորել մարդու, որն ունակ լինի ինքնուրույն գործել, ունենա սեփական դիրքորոշում, ստեղծագործաբար և համագործակցային կարողություններ:

Ունենալով կարևոր դերակատարություն այս գործընթացում՝ ուսուցիչն առաջնահերթ կերպով առնչվում է այս մարտահրավերներին, և նրա գլխավոր խնդիրն է դառնում սովորողի անձի զարգացումը, նրա ճանաչողական գործընթացի խթանումը: Ուսուցումն արդյունավետ իրականացնելու համար ուսուցչից պահանջվում են նոր կարողություններ և մասնագիտական որակներ: Նա պետք է կարողանա ծրագրել և կազմակերպել իր աշխատանքը զուգորդված օգտագործել ավանդական և ժամանակակից մեթոդները, զգալ և ընկալել նորը, մշտապես կատարելագործվել, լինել հանդուրժող և մշտապես տեղեկացված լինել մանկավարժության նոր միտումներին:

Հետևաբար, ավարտական հետազոտական աշխատանքի թեման արդիական է, քանի որ ուսուցչի գործունեության մեջ ամենակարևորն ու դժվարը մանկավարժական խնդիրների լուծման միջոցների և մեթոդների ճիշտ ընտրությունն է: Ինտերակտիվ մոտեցումներն անհրաժեշտ են աշակերտներին մոտիվացնելու, ուսուցումը հետաքրքիր ու մասնակցային դարձնելու համար: Փոխներգործուն մեթոդներով ուսուցումը հնարավորություն է տալիս դասապրոցեսի ընթացքում մասնակցելու ողջ դասարանին, ուսուցչի կողմից չի մատուցվում պատրաստի գիտելիքները, այլ հնարավորություն է տրվում աշակերտներին ակտիվացնել իրենց գիտելիքները, հիշողությունը, ինչպես նաև պրակտիկ գործունեության ընթացքում ձեռքբերել նորանոր գիտելիքներ և հմտություններ:

Հետազոտական աշխատանքի նպատակն է բացահայտել փոխներգործուն մեթոդների կիրառման արդյունավետությունը միջին դպրոցում ֆրանսերենի ուսուցման գործընթացում:

Հետազոտական աշխատանքի խնդիրներն են՝

- ուսումնասիրել փոխներգործուն մեթոդների էությունը, տեսակները,
- արդյունավետ կերպով համադրել և կիրառել դրանք դպրոցում ֆրանսերենի ուսուցման գործընթացում,
- բացահայտել կիրառված փոխներգործուն մեթոդների արդյունավետությունը:

Թեմայի գործնական նշանակությունը պայմանավորված է միջին դպրոցում ֆրանսերենի ուսուցման գործընթացում փոխներգործուն մեթոդների արդյունավետ կիրառմամբ կարողունակահեն կրթություն իրականացնելուն միտված ուսումնական գործընթացի արդյունավետ կազմակերպմանն ու իրականացմանը, սովորողների ճանաչողական կարողությունների, հմտությունների, արժեքների, վերաբերմունքի և դիրքորոշումների ձևավորմանը,:

ՓՈԽՆԵՐԳՈՐԾՈՒՆ ՄԵԹՈԴՆԵՐԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ ԴՊՐՈՑՈՒՄ ՈՐՊԵՍ ՖՐԱՆՍԵՐԵՆԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ՄԻՋՈՑ

1.1 Փոխներգործուն մեթոդների էությունը, առանձնահատկություններն ու կիրառման սկզբունքները

Ուսուցման ճանաչողական գործընթացը ակտիվացնելու համար ուսուցման ավանդական մեթոդներին զուգահեռ կիրառվում են նաև փոխներգործուն (ինտերակտիվ) մեթոդներ՝ օգտագործելով այնպիսի հնարներ, ինչպիսիք են պրոբլեմային իրավիճակի ստեղծումը, սովորողների հետաքրքրությունների, հմտությունների, կարողությունների ձևավորմանն ուղղված պրակտիկ վարժություններ, իրավիճակային խնդիրներ: Փոխներգործուն դասը փոխազդեցություն է, ոչ միայն դասավանդողի և սովորողի, այլև հենց իրենց՝ սովորողների միջև, ուսումնական նյութի և սովորողների միջև: Այն սովորողին մղում է երկխոսության, հաղորդակցման, համագործակցության և ուսուցման գործընթացը մոտեցնում է իրական կյանքին: Փոխներգործուն մեթոդները պետք է կիրառվեն ուսուցման գործընթացի այն հատվածում, երբ անհրաժեշտ է զարգացնել աշակերի մտածողությունը, ճանաչողական ակտիվությունը,հաղորդակցական կարողությունը:

Ինտերակտիվ ուսուցման էությունն ան է, որ բոլոր սովորողները ընդգրկվում են ուսումնա ռության մեջ: Այս մեթոդը հնարավորություն է տալիս փոխել նաև ավանդական սեղանների դիրքը: Սեղանները զույգ-զույգ միացնելով ստանում ենք կղզյակների տպավորություն և աշակերտները կարողանում են կատարել խմբային աշխատանքներ, մեկը մյուսին օգնելով, այստեղ բացառվում է որևէ մեկի առաջնությունը: Տեղի է ունենում գիտելիքների ու մտքերի փոխանակում իրար մեջ, որը կատրվում է բարյացակամորեն: Դա նպաստում է ոչ միայն նոր գիտելիքներ ստանալուն, այլև զարգացնում է իմացական գործընթացը, այն բերելով ավելի բարձր մակարդակի՝ համագործակցային ձևի: Ըստ կատարված հետազոտությունների արդյունքների մարդը հիշում է իր կարդացածի 10 %-ը, լսածի՝ 20%, տեսածի՝ 90%-ը: Ուստի, նոր, ուսուցման ռազմավարությունն առաջ է բերում փոխներգործուն մեթոդների կիրառման անհրաժեշտություն:

Ժամանակակից կրթական գործընթացը պետք է իրականացվի այնպես, որ սովորողների մոտ հետաքրքրություն առաջանա գիտելիքների նկատմամբ, զարգանա նրանց ստեղծագործելու կարողությունը, ինքնուրույն ճանաչողական գործունեությունը: Դրան հասնելու համար անհրաժեշտ է, որ դպրոցում իրականցվեն այնպիսի դասեր, որոնք ապահովում են աշակերտի ակտիվ մասնակցությունը:

Ինտերակտիվ ուսուցման սկզբունքներն են՝

- Փոխներգործություն, փոխուսուցում (ուսումնական գործընթացի մասնակիցներըհավասար են, ոչ մի աշակերտ չի քննադատվում)
- Սովորողի ակտիվություն (ուսուցիչը հանում է սովորողների միջև առաջացածլարվածությունը,)
- Համագործակցություն (ստեղծվում է միջավայր, որտեղ աշակերտը կարող է կիրառել իրունեցած գիտելիքներն ու հմտությունները)
- Ինքնաարտահայտման խրախուսում (դժվարությունների դեպքում ուսուցիչըմիջամտում է)
- ՏՀՏ-ներ-ի կիրառում (համակարգիչ, էլ. գրատախտակ, պրոյեկտոր, համացանց,տեսանյութ և այլն)
- Հետադարձ կապի ապահովում

Փոխներգործուն մեթոդների հիմքում ընկած է երկխոսությունը, ինչպես ուսուցչի և աշակերտների միջև, այնպես էլ իրենց՝ աշակերտների միջև: Երկխոսության ընթացքում զարգանում է հաղորդակցման հմտությունները, խնդիրները միասին լուծելու կարողությունները, և ամենակարևորը զարգանում է աշակերտների խոսքը: Այս մեթոդների կիրառման նպատակն է աշակերտներին ներգրավել ինքնուրույն իմացականգործունեության մեջ, ստեղծել անձնական շահագրգռվածություն ցանկացած ճանաչողական խնդիրներ լուծելու համար, սովորեցնել կիրառել ուսանողների կողմից ձեռք բերված գիտելիքները:

Փոխներգործուն /ինտերակտիվ/ մեթոդի առանձնահատկություններն են.

- սովորողը նյութը սովորում է ինչ-որ բան կատարելով, մասնակցելով որոշակի գործընթացի,
- սովորողը հենվում է ոչ այնքան իր հիշողությանը, այլ ինքնուրույն, ստողծագործական, քննադատական մտածողությանը,

- սովորողի համար հնարավորություն է ստեղծվում ինչպես անհատական, այնպես էլխմբային աշխատանքի համար,
- սովորողը ձեռք է բերում համագործակցային կարողություններ, սոցիալականփոխազդեցության, հաղորդակցական կարողություններ
- նյութի յուրացման ընթացքում սովորողը հնարավորություն է ստանում ի մի բերել,ամփոփել,ակտիվացնել և կիրառել սովորածը,
- ստեղծվում է ինքնակրթության միջավայր:

Ինտերակտիվ ուսուցման ժամանակ ուսուցչի ակտիվությունն իր տեղը զիջում է սովորողների ակտիվությանը: Սովորողը պետք է լինի գործընթացի կենտրոնում, ցուցաբերի հետաքրքրություն և ակտիվ մասնակցություն: Այս մեթոդները դառնում են արդյունավետ, երբ ցանկացած աշակերտ զգում է իր մասնակցության և անձի կարևորության դերն ու հանդես է գալիս որպես կրթական գործընթացի լիիրավ մասնակից:

Ինտերակտիվ դասը բերում է նաև ուսուցչի դերի փոփոխության: Ուսուցիչն այսօր հանդես է գալիս ոչ միայն որպես տեղեկատվության աղբյուր, այլ կարգավորում և կազմակերպում է սովորողների ինքնուրույն գործունեությունը:

Ուսուցման տարբեր փուլերում ուսուցիչը կարող է հանդես գալ որպես՝

- ուսուցումը վարող, ուղղորդող (բացատրում է հանձնարարությունը, հաղորդում է նոր գիտելիքը)
- խորհրդատու (դիմում է աշակերտների փորձին , օգնում է լուծումներ գտնել)
- իրազեկիչ-փորձագետ (հետևում է գործընթացի արդյունքներին, պատասխանում է հարցերին)
- կազմակերպիչ (ղեկավարվում է դասարանի տարածքը, դասավորվածությունը, խմբերի է բաժանում, ապահովվում է աշխատանքների բազմազանությունը, խթանում է ինքնուրույն տվյալներ հավաքելը, կազմակերպում է մասնակիցների փոխգործողությունը)
- գնահատող (ստեղծում է գնահատման գործիքներ, վեր է լուծում սխալները):

1.2 Փոխներգործուն մեթոդների ընտրությունը և արդյունավետ համադրումը միջին դպրոցում ֆրանսերենի դասերին

Ի՞նչ, ինչո՞ւ և ինչպե՞ս, յուրաքանչյուր ուսուցիչ դասարան մտնելուց առաջ հավանաբար ինքն իրեն տալիս է այս հարցերը, ո՞րն է կրթության նպատակը և ի՞նչ պետք է նա սովորեցնի աշակերտին:

Ուսուցման մեթոդը մանկավարժական գրականության մեջ բազմաթիվ, երբեմն իրարամերժ բնութագրումներ կարող է ունենալ, իբրև՝

- Ուսուցիչ՝ դեպի աշակերտ գնացող մտքի ճանապարհը
- Սովորողների ճանաչողական գործունեության կազմակերպման հիմքում ընկած տրամաբանական կատեգորիա
- Մանկավարժի և սովորողի՝ ուսուցման նպատակներին ուղղված և որոշակիորեն կարգավորված գործունեություն:
- Ուսուցչի և աշակերտի համագործակցության եղանակ:

Գոյություն ունեն ուսուցման մեթոդների դասակարգման բազմաթիվ տարբերակներ, որոնց հիմքում դրվում են հետևյալ հատկանիշները,

- Ճանաչողական աղբյուրները(ուսուցման խոսքային, դիտողական, գործնական մեթոդներ)
- Տրամաբանական սկզբունքներ (ուսուցման վերլուծական-համադրական, ինդուկտիվ-դեդուկտիվ մեթոդներ)
- Ուսուցման տիպը (ուսուցման բացատրական-մեկնաբանական,պրոբլեմային-զարգացնող մեթոդներ)
- Դիդակտիկ նպատակները և գործառույթները (խթանման, կազմակերպման և վերահսկաման մեթոդներ)
- Ուսուցչի գործունեության տեսակը (շարադրման, ինքնուրույն ուսումնական գործունեության կազմակերպման մեթոդներ) և այլն:

Բազմաթիվ հիմնական մեթոդական նորարարություններ այսօր կապվում են ուսուցման ինտերակտիվ մեթոդների կիրառման հետ: Ինտերակտիվ նշանակում է փոխանցել կամ զրույցի, երկխոսության մեջ գտնվել ինչ-որ մեկի հետ:Այն ուսուցողական տեխնոլոգիա է՝ հիմնված խմբի անդամների փոխազդեցության և ուսումնառության խնդիրների լուծման, սովորողի ազատության հետ: Չկան ինտերակտիվ մեթոդների արդյունավետ կիրառման բանաձևեր: Ցանկացած դասարան, դասապրոցես եզակի է, անկրկնելի: Ուսուցչի ծշխնդիրն է ընդհանուր սահմանված մեթոդը հարմարեցնել եզակի իրավիճակին:

Փոխներգործուն մեթոդները պետք է կիրառվեն ուսուցման գործընթացի ճիշտ հատվածում, որպեսզի լինեն արդյունավետ: Միջին դպրոցում փորձել ենք համադրել տարբեր փոխներգործուն մեթոդներ գործունեության տարբեր ձևերի համար, որոնք ապահովել են առավել արդյունավետ արդյունքներ ֆրանսերենի դասին՝ խթանելով սովորողների մտածողությունը և ճանաչողական ակտիվությունը:

Մեթոդներ, որոնք հարմար են կիրառել դասի խթանման փուլում.

- Մտագրոհ
- Գուշակություն
- Համագործակցություն, հակամարտություն, համակեցություն
- Մտածիր, զույգ կազմիր, քննարկիր
- Խաթարված հերթականություն
- Դերային խաղ

«Մտագրոհ» մեթոդը կիրառվում է դասի խթանման փուլում (mise en route):Մեթոդի սկզբունքային առանձնահատկությունն այն է,որ յուրաքանչյուր մասնակից ազատ և անկաշկանդ արտահայտում է իր իմացածը,չի անհանգստանում սխալվելուց և հակասական գաղափարներ արտահայտելու մտավախություն չի ունենում:Այսպիսի անկաշկանդ մթնոլորտի ստեղծումը նպաստում է ստեղծագործական մտածողության զարգացմանը:Մտքերը գրատախտակին գրի առնելուց հետո,ընթերցում են նոր նյութը, ապա ամբողջ դասարանով քննարկում են առաջադրված գաղափարները,ան-

հրաժեշտության դեպքում լրացնում,եղած անհամաձայնությունները քննարկում,ուղղում: Այս մեթոդի հիմնական նպատակը աշակերտների ուշադրությունը տվյալ նյութի վրա կենտրոնացնելն է, նոր գաղափարներ հայտնաբերելը:Օրինակ la France,l'Armenie,voyage թեմաների ժամանակ շատ արդյունավետ է կիրառել այս մեթոդը:

«Գուշակություն» մեթոդը նույնպես կիրառվում է սովորողների հետաքրքրությունը խթանելու նպատակով: Աշակերտները նյութի հիմնական կարևոր հասկացությունները կամ վերնագիրը գրում են թերթիկների վրա, կտրատում առանձին բառերի և պահում դասասենյակում՝ աչքից հեռու տեղերում: Դասը սկսելուց առաջ սովորողներին առաջարկվում է գտնել դրանք և համադրելով ստանալ վերնագիրը կամ գլխավոր միտքը: Կարելի է առաջարկել նաև ստացածը կարդալով գուշակել՝ ինչի մասին է դասը, կարծիքները լսել և առաջարկել ուսումնասիրել բուն դասանյութն ու ընդհանրություններ կամ տարբերություններ գտնել գուշակածի ու դասանյութի միջև: Կարելի է նաև մտածողության հմտություններ զարգացնելով իրականացնել այս հնարը:

Օրինակ՝ կարող եք առանձին թղթերի վրա գրել «կռիվ»,«պատերազմ», «տարակարծություն», «անհամաձայնություն» բառերը և աշակերտներին առաջարկել գտնել այն հասկացությունը, որը միավորում է այս բառերը: Պատասխանն է՝կոնֆլիկտը:

« Խաթարված հերթականություն» մեթոդը նպաստում է աշակերտների ուշադրության կենտրոնացմանը, գիտելիքների և կարողությունների զարգացմանը:

Ուսուցիչը նախօրոք պատրաստում է թղթեր, որոնց վրա գրում է տեքստից ընտրված կարևոր բառեր, փաստեր, իրադարձություններ: Դրանք խառը հերթականությամբ փակցնում է գրատախտակին, հետո խնդրում է, որ դասավորեն հերթականությամբ:

Օրինակ `l'hiatoire ce n'est oas seulement la vie des rois et les grandes batailles

«Համագործակցություն, հակամարտություն, համակեցություն» մեթոդի կիրառման ընթացքում երեք սովորող դուրս են գալիս դասարանից: Ուսուցիչը դասարանին ներկայացնում է դասի թեմայի հետ կապված որևէ պատկեր, ապա դրսի երեխաներից մեկը ներս է գալիս, 15 վայրկյան նայում նկարը, որից հետո իր տեսածը ներկայացնում է երկրորդին, վորջինս էլ՝ երրորդին, ով դասարանին պատմում է իր լսածը: Նրա պատմածը էականորեն տարբերվում է աշակերտների տեսածից: Կազմակերպում է քննարկում-վերլուծություն:Աշակերտները հասկանում են, որ հաղորդակցությունը շատ կարևոր

է հասարակական հարաբերություններում: Ճիշտ հաղորդակցությունը նպաստում է համագործակցությանը, ոչ ճիշտ հաղորդակցութունը կարող է հանգեցնել հակասությունների:

«Մտածիր-զույգ կազմիր-քննարկիր» մեթոդն արագ կատարվող համատեղաշխատանք է, որն օգնում է աշակերտներին մտածել, կշռադատել տեքստի շուրջ և ընկերների օգնությամբ հստակեցնել, ձևակերպել իրենց մտքերը: Ուսուցիչը նախօրոք թեմայի շուրջ հարցեր է պատրաստում, որոնք սովորաբար բաց բնույթ ունեն, այսինքն՝ երկակի պատասխան են ենթադրում և աշակերտներին խնդրում է կրճատ գրել այդ հարցերի պատասխանները: Այնուհետև աշակերտները զույգեր են կազմում և միմյանց հետ մտքեր փոխանակում ֆրանսերենով ՝ փորձելով գտնել այն պատասխանը, որն ամբողջացնում է իրենց երկուսի պատասխանները:Այս մեթոդը շատ արդյունավետ է կիրառել sport,la mode թեմաների ժամանակ: Ապա ուսուցիչը հարցնում է զույգերից մի քանիսին, որոնք ներկայացնում են իրենց քննարկումների արդյունքները:

Դասի ընկալման փուլում կարելի է իրականացնել ֆիլմի դիտում, որից հետո ուսուցիչն առաջարկում է մի քանի հարցեր, որոնք քննարկվում են:

«Դերային խաղ»-ը օգնում է վերարտադրել կոնկրետ իրավիճակներ, սովորեցնում է համագործակցել և ուսուցումը նմանեցնում է իրական կյանքին: Տեսական գիտելիքները փոխվում են գործնականի:

Իմաստի ընկալման փուլում կիրառվող մեթոդներ են՝

- «Տ-աձև աղյուսակ»,
- «Գաղափարների քարտեզ»,
- «Խճանկար»,
- «Երեք բանալի և մեկ կողպեք»,
- «Շրջագայություն պատկերասրահում»:

Կշռադատման փուլում օգտագործվող մեթոդներից են՝

- «Կլոր սեղան»,
- «Երկու բան»,
- «Գիտելիքի դոմինո»
- «Կիսատ նախադասություն»,
- տեսահոլովակի,պաստառիստեղծում և այլն:

«Գիտելիքի դոմինո» մեթոդի իրաանացման ժամանակ սովորողները նստում են սեղանի շուրջ: Նրանցից յուրաքանչյուրը ստանում է թեմայի ամփոփման վերաբերյալ հարցեր և պատասխաններ պարունակող քարտեր: Ուսուցչի հրահանգով սովորողներից մեկը իր քարտի հարցը կարդալով դնում է սեղանին: Հնչած հարցի պատասխանն ունեցող սովորողը ասում է պատասխանը և քարտը դնում սեղանին՝ նախորդ քարտի շարունակությամբ և կարդում է իր քարտի հարցը: Հաջորդաբար շրջանաձև դրվում են բոլոր քարտերը: Վերջում շրջվում են բոլոր քարտերը և ճիշտ դասավորվածության պարագայում քարտերի մյուս երեսին երևում է թեմայի կարևոր միտքը:

«Խճանկար» մեթոոդը հայտնագործել է ամերիկացի սոցիոլոգ և հոգեբան Էլիոթ Արոնսոնը: Մեթոդի կիրառման ժամանակ աշակերտները խմբերով աշխատում են միևնույն թեմայի շուրջ: Նյութն ուսումնասիրվում է հատվածաբար ,ապա միավորվում են խմբային աշխատանքների արդյունքները:Սովորողները մեծ պատասխանատվություն են կրում և հանդես են գալիս և՛ սովորողի, և՛ սովորոցների դերում: Միջին դպրոցում, հաշվի առնելով սովորողների տարիքային առանձնահատկությունները և հիմնվելով առարկայական չափորոշչի վրա,կիրառել ենք տարբեր փոխներգործուն մեթոդներ:Օրինակ՝ պաստառների պատրաստում <<Ֆրանսիայի հայտնիները>>, <<Իմ քաղաքը>> թեմաների շուրջ, սահիկաշար Հայաստանի և ֆրանսիայի խորհրդանիշների ու տեսարժան վայրերի վերաբերյալ,<<Կլոր սեղան>>-ի կազմակերպում, <<Իմ մոլորակն իմ տունն է>> թեմայի շուրջ, որի ընթացքում քննարկվել են բնապահպանական խնդիրներ, տեսահոլովակի պատրաստում ազգային ուտեստների վերաբերյալ, միջառարկայական կապերի ստեղծում ինտեգրված դասերի միջոցով, խաչբառների ստեղծում տարբեր առցանց գործիքների օգնությամբ:

Փոխներգործուն մեթոդների կիրառությունը անհնար է պատկերացնել առանց տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառման: Դրանք նպատակ ունեն զարգացնել աշակերտների ունկնդրելու կարողությունները, օտար լեզվով խոսելու հմտությունները, հարստացնել բառապաշարը, ստեղծել միջավայր, որտեղ աշակերտը կկիրառի իր գիտելիքներն ու հմտությունները, միջառարկայական կապ կստեղծի այլ առարկաների հետ, տեսանելի դարձնել ուսուցանվող նյութը:

Հավելված 1-ում ներկայացված է միջին դպրոցում իրականացված ֆրանսերենի դասի պլան, որտեղ ընտրվել և համադրվել են այնպիսի փոխներգործուն մեթոդներ, որոնք ապահովել են առարկայական չափորոշչով սահմանված վերջնարդյունքները: Փոխներգործուն մեթոդներով իրականացված նմանատիպ մի շարք դասեր, որոնք իրականացվել են միջին դպրոցում, ևս ապահովել են ակնկալվող վերջնարդյունքներ:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ամփոփելով հետազոտական աշխատանքը՝ կարող ենք եզրակացնել, որ փոխներգործուն մեթոդները ժամանակակից ակտիվ մեթոդներ են, որոնք մեծապես նպաստում են սովորողների մոտ նյութի հանդեպ հետաքրքրության առաջացմանը, նրանց ինքնուրույն ճանաչողական գործընթացի , հաղորդակցական կարողությունների զարգացմանը:

Փոխներգործուն մեթոդների կիրառումը հնարավորություն է տալիս.

- բարձրացնել օտար լեզվի (ֆրանսերենի) ուսուցման արդյունավետությունը,
- ակտիվացնել սովորողների սոցիալական դերը,
- զարգացնել ինքնուրույն ստեղծագործելու կարողություն,
- միջին դպրոցի սովորողների մոտ ձևավորել հարգանք օտար մշակույթի հանդեպ
- ստեղծել միջավայր, որտեղ աշակերտը հնարավորության ունենա դրսևորվել, կիրառել իր գիտելիքներն ու հմտությունները,
- զարգացնել հաղորդակցական կարողությունները՝ կիրառելով տեղեկատվական տեխնոլոգիաներ,
- դաստիարակել հանդուրժողականություն և թիմային աշխատանքի հմտություններ:

Փոխներգործուն մեթոդները լավագույնս նպաստում են կրթական վերջնարդյունքներով ձևակերպված գիտելիքների, կարողությունների և հմտությունների ձեռքբերմանը ուսանողների կողմից: Դրանք բազմաձև են՝ կախված աշակերտների գիտելիքների ու ընդունակությունների տարբեր մակարդակներից:

Փոխներգործուն մեթոդները խթանում են աշակերտների ակտիվությունը դասարանում, ինքնուրույնությունը և տրամադրում խմբային աշխատանքի՝ ապահովելով համատեղ շփում, ոգեշնչում և անկաշկանդ միջավայր:

ՕԳՏԱԳՈՐԾԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Արդյունավետ ուսուցման հնարներ, / Ս. Խաչատրյան.- Եր.: Ֆրիդրիխ Էբերտ հիմնադրամ, Հայաստան 2020.- 74 էջ:
2. Խաչատրյան Ս. Գ. , Ուսուցման ժամանակակից մեթոդների կիրառում, Գյումրի 2006
3. Հ311 Գիտական հոդվածների ժողովածու,Եր., «Վան Արյան»,2016,284 էջ
4. Հանրակրթության պետական չափորոշիչ, 2021թ. :
5. Հանրակրթական հիմնական դպրոցի «ֆրանսերեն» առարկայի չափորոշիչ և ծրագիր, 2012թ.
6. https://mooc.cavilam.com
7. https://library.fes.de/pdf-files/bueros/georgien/16023.pdf
8. https://forum.armedu.am/
9. https://ahaslides.com/hy/blog/15-innovative-teaching-methods/
10. http://ysu.am/files/otar-lezvi-dasavandman.pdf

Հավելված

ՖՐԱՆՍԵՐԵՆԻ ԴԱՍԻ ՊԼԱՆ

Ուսուցչի անուն, ազգանուն՝ Շ.Գաբրիելյան

Դասարան՝ Յոթերորդ

<<Ա>> Առարկա՝

Ֆրանսերեն

Դասի տևողությունը՝ 45 ր

Դասի թեման՝ Les 10-15 ans et le sport (Ն. Ա. Սելիվանովա, Ե. Դ. Բերեգովսկայա), Ֆրանսերեն 7 , էջ 114-115

Դասի նպատակը՝

1. ներմուծել սպորտը՝որպես առողջ ապրելակերպի, համամարդկային արժեքի և հավասար հնարավորությունների իրացման գաղափար
2. ընդլայնել սպորտին և մարզաձևորին առնչվող բառապաշարի
3. առանձնացնել հոմանիշ և հականիշ բառերը
4. ներմուծել և ամրապնդել թեմային համապատասխան քերականական նյութը
5. ներմուծել Ֆրանսիայում և Հայաստանում տարածված մարզաձևերը և նկարագրելհայտնի մարզիկներին

Խնդիրները՝

Կրթական .

- ընդլայնել ճանաչողական գիտելիքները
- հարստացնել բառապաշարը՝բառերի բացատրության ճանապարհով,
- զարգացնել կարդալու և վերարտադրելու կարողություններ,
- կարողանալ ճիշտ հոդեր օգտագործել <<aimer,adorer,faire>> բայերի հետ սպորտաձևերի մասին խոսելուց
- կարողանալ համեմատել Ֆրանսիայի և Հայաստանի միջին դպրոցում սովորողների նախընտրած սպորտաձևերը
- հասկանալ տեսանյութի բովանդակությունը,

- զարգացնել գրավոր և բանավոր խոսքի, ունկնդրելու կարողություններ:
- ձևավորել առողջ ապրելակերպի սկզբունքները

Դաստիարակչական՝

- ձևավորել վերաբերմունք առողջ ապրելակերպի, խտրականության բացառման, ապրումակցման և մարդկանց հավասար հնարավորությունների վերաբերյալ
- ձևավորել գեղեցիկը, բարին, մարդակայինը տեսնելու, ընկալելու և գնահատելու կարողություն:

Վերջնարդյունքներ՝

ըստ առարկայական չափորոշչի.

- ✓ կճանաչեն հայ և օտարազգի չեմպիոններին
- ✓ կկարողանան լսել և հասկանալ տարբեր սպորտային հաղորդումների հիմնականիմաստը
- ✓ կկարողանան ֆրանսերենով ներկայացնել իր սպորտային նախասիրությունները
- ✓ կբացահայտեն նոր սպորտաձևեր
- ✓ կկարևորեն մարդու առողջ ապրելակերպը
- ✓ կորոնեն և կգտնեն տեղեկություններ հարցման համար

ըստ Հանրակրթության պետական չափորոշչի.

Հ12, Հ13, Հ14, Հ26, Հ27, Հ30, Հ31:

Միջառարկայական,ներառարկայական կապեր՝

ֆիզկուլտուրա,Պատմություն,կերպարվեստ, կենսաբանություն

Դասի տիպը՝

Գիտելիքների,կարողությունների և հմտությունների կատարելագործմանդաս

Անհրաժեշտ նյութեր և սարքավորումներ՝

համակարգիչ, դիտակտիկ քարտեր,դասագիրք

Ուսուցչի օժանդակ ռեսուրսներ, տեսաձայնային և թվային միջոցներ՝ տեսաֆիլմի ցուցադրություն

Դասիընթացքը

Հաշվառում՝17աշակետ

Տնային հանձնարարության ստուգում՝ Ստուգել տնային աշխատանքները, պարզաբանելանհասկանալի հարցերը:

Խթանում՝

- Մուտքի զրույց՝ <<Սպորտ>> թեմայով,
- Սահիկաշարի ցուցադրություն:

Դասի թեմայի մեկնաբանություն - <Les 10-15 ans et le sport>>

Աշակերտները դասարանում քայլելով շշնջում են սպորտին և ժամանցին վերաբերող բառեր: Այդ բառերը փակցվում են գրատախտակին: Աշակերտները բաժանվում են երեք խմբի: Առաջին խումբը կանաչ գույնով առանձնացնում է անհատական սպորտաձևերը, երկրորդը՝ կապույտով առանձնացնում է խմբային սպորտաձևերը, երրորդը՝ կարմիրով առանձնցնում է վտանգավոր սպորտաձևերը:

Իմաստի ընկալում՝

- տեսանյութի դիտում,
- տեսանյութի վերլուծություն,
- սպորտաձևերի անունների վերհանում դասից և համեմատում արդեն փակցվածսպորտաձևերի հետ,
- https://www.youtube.com/watch?v=xpcjZT1OKOI
- զրույց տեսանյութի բովադակության շուրջ՝ վերլուծություններն և եզրահանգումներկատարելու նպատակով,
- բառային աշխատանք,
- կարծիքների արտահայտում,
- քարտ-նկարների համապատասխանեցում սպորտաձևերի հետ,
- հարցման թերթիկի ուսումնասիրություն,
- առանձին խմբերով թերթիկի լրացում,
- նմանությունների և տարբերությունների վերհանում,
- խմբերով պաստառի տարբեր հոդվածների ստեղծում և քննարկում,
- պաստառի ամբողջականացում:

Կշռադատում՝

Կիրառել <<Երկու բան>> մեթոդը:

Գնահատում՝ Դասի ընթացքում և վերջում գնահատել աշակերտներին՝ տալով համապատասխան ցուցումներ:

Անդրադարձ՝ խոսել սպորտային նախասիրությունների և առողջ ապրելակերպի մասին: